

Բարև ձեզ: Ջոն Մյուիր միջանկյալ դպրոցի տնօրեն դոկտոր Միլլերն է զանգահարում այս շաբաթվա նորությունների թողարկումով: Վաղը երեկոյան, ժամը 7-ին տեղի կունենա PTSD կազմակերպության ուսումնական տարվա վերջին ժողովը: Այն տեղի կունենա անձամբ ներկայանալով դպրոցի գրադարան: Հրավիրում ենք բոլորին ներկա գտնվել: Կարող եք մասնակցել նաև առցանց՝ Ջումի հարթակով՝ օգտվելով կցված օրակարգում տեղադրված հղումից: Հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 6:30-ին, տեղի կունենա գործիքային երաժշտական ծրագրի գարնանային համերգը: Տոմսերի արժեքն է \$10 դոլար, իսկ Մյուիր դպրոցի աշակերտների համար ընդամենը \$5 դոլար: Մենք սկսում ենք հետ հավաքել աշակերտների դասագրքերը: 8-րդ դասարանցիները պետք է դպրոց բերեն դասագրքերը այս շաբաթվա ընթացքում, իսկ 6-րդ և 7-րդ դասարանցիները՝ հաջորդ շաբաթ: Քրոմբուկները հետ չենք վերցնելու: Բոլոր աշակերտները, ներառելով բոլոր 8-րդ դասարանի աշակերտները, ովքեր ուսումը շարունակելու են ԲԴՄԾ-ի միջնակարգ դպրոցներում, պետք է տանը պահեն Քրոմբուկները և լիցքավորման մարտկոցները: Բոլոր աշակերտները պետք է Քրոմբուկները պահեն մինչև միջնակարգ դպրոցն ավարտելը: Եթե աշակերտին 2 Քրոմբուկ է հատկացվել, խնդրում ենք այդ աշակերտներին այցելել դպրոցի տեղնուլոգիայի կենտրոնը (Media Center), որպեսզի պարզեն, թե որ Քրոմբուկը պետք է պահեն և որը վերադարձնեն դպրոցին: Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ հաջորդ շաբաթ, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին, աշակերտները կհանձնեն տարեվերջյան քննությունները:

Շնորհակալություն և հաջողություն եմ ցանկանում: